

**ՄՈՂԵԼԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՆԵՐՍՈՒԾՈՒՄԸ
ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՐՋ
ՎԵՐԱՐՏԱՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՄԱՏԵՔԱՏՈՒՄ¹**

Գ. Ա. ՂԱՐԻՔԱՆ, Ա. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

18 – ըդ դարում դոկտոր Ֆրանսուա Քենեի շուրջ համախմբված գործիչները գիտություն ներմուծեցին մի նոր ուսմունք, որը կոչվեց Բնավարություն (Ֆիզիոկրատիա²): Այս դպրոցի գիտական մտքի գաղափարական հենքը Ֆր. Քենեի պարզ վերարտադրության մակրոտնտեսական աղյուսակն է: Տնտեսագիտության մեջ այն առաջին աշխատությունն էր, որում առանցքայինը տնտեսության մակրոտնտեսական նկարագրությունն էր: Առաջին անգամ տնտեսագիտական միտքը «գտված» ներկայացվում էր մոդելային մտածողության տեսքով: Ներկայիս տնտեսագիտական բարդ մոդելներն իրենց գաղափարական արարման հիմքում կրում են Քենեի մոդելային մտածողության արտածման ազդեցությունը: Իհարկե, տնտեսագիտության զարգացման ներկայիս ձևաչափում մոդելային մտածողությունը սկզբունքորեն փոխել է փոխառնչությունների բնույթը: Շեշտադրվում են անորոշության, ռիսկի, մոնետար գործոնների, հոգեբանական և մաթեմատիկական ապարատի կիրառման կապերը, ինտելեկտուալ և կենցաղային մակարդակներում որոշումների կայացման տարակերպության հնարավորությունները: Այս ամենն արտահայտվում է «սպասումների հեռանկարային» տեսություններում, էկոնոմետրիկ, բազմագործոն, դիալեկտիկական վերլուծություններում: Քենեի տնտեսական աղյուսակը մակրոտնտեսական պարզ վերարտադրության մոդելային շարադրանք է: Այն ցույց է տալիս հասարակական վերարտադրության գործընթացը մեկ տարվա ընթացքում փակ տնտեսական համակարգում:

Հետաքրքրական է, որ այս գաղափարը Քենեն փոխառել էր բժշկությունից: *Այս բնագավառում ևս նա կողմնակից էր բնական բժշկական եղանակների կիրառությանը: Նրա հասարակական, տնտեսական հայացքները համապատասխանում էին այս սկզբունքային մտտեցմանը: Այս համատեքստի վերլուծությանը ընդհանրապես մակրոտնտեսական պարզ վերարտադրության աղյուսակի ներկայացնելը համադրվում է տնտեսագիտական բնագավառ բժշկական մտածողության սկզբունքների տարածման հետ: Ինչպես արյունը³ շրջանառվում է ողջ օրգանիզմում, այնպես*

¹ Հիմնախնդիրը մասամբ քննարկված է Ա. Մարտիրոսյանի «Տնտեսագիտական մտքի պատմություն. ուսումնառության նյութեր» գրքում, Եր., 2005:

² Ֆիզիոս – (լատ.) բնություն, կրատոս՝ իշխանություն:

³ Ընդհանրապես Քենեի առաջին հոդվածը վերաբերում էր արյան շրջանառության խնդիրներին: Նույնիսկ այս պարագայում նրանից առաջ եղած բժիշկները ընդունում էին, որ արյունը շրջանառվում է օրգանիզմում մարդու գիտակցությունից անկախ: Քենեն համարվում էր տվյալ ժամանակահատվածում լավագույն բժիշկներից մեկը, ուստի և ի սկզբանե բժշկական ուղղվածությամբ զարգացած նրա մտածողությունում ակտիվացված էին օրգանիզմում արյան շրջանառությանն առնչվող հիմնահարցեր: Նրա հայտնի տնտեսական աղյուսակի արտածման գաղափարը կարող էր այս մտածողության տրամաբանության իներցիոն ազդեցությունը կրել: Քենեի տնտեսական աղյուսակում դիտարկվում է ապրանքների շրջանառության օրինաչափությունները տնտեսական

էլ ապրանքները փողային դրսևորմամբ տարածվում են ողջ տնտեսական օրգանիզմում: Քենեն հասարակությունը նմանեցնում էր մարդկային օրգանիզմին: Գյուղատրնտեսությունը համարում էր սիրտը, որտեղ ստեղծված «հարստության» շնորհիվ սնվում են հասարակության օրգանիզմի տարբեր մասերը: Այդ հարստությունը տարբեր դասակարգերի միջև բաշխող առևտրական ուղիները նա նմանեցնում էր մարդու օրգանիզմի արյունատար անոթների, որտեղ նոր «հարստության» ստեղծման մասին խոսք լինել չէր կարող:

Քենեի մակրոտնտեսական պարզ վերարտադրության աղյուսակը ներկայիս ապրանքների և եկամտի շրջապատույտի մոդելի նախատիպն է, այլ կերպ՝ իրական կյանքի գծապատկերը, և, ինչպես ցանկացած մոդել, այն փորձում էր պարզեցնել իրական կյանքի տնտեսական ողջ բազմազանությունը: Մոդելի կառուցման նպատակը հասարակությունում, տնտեսական օրգանիզմում գործող օրինաչափությունների բացահայտումն էր, և այդ նպատակով էլ կատարվում էին վերացարկումներ, և ենթադրվում էր, որ

- տնտեսությունը փակ տնտեսական համակարգ է,
- գները մեկ տարվա ընթացքում մնում են անփոփոխ,
- տեղի չի ունենում ներդրումների ծավալի աճ,
- առևտուր է կատարվում միայն երեք խավերի միջև,
- հողային ողջ տարածքները մշակվում են ֆերմերների կողմից, որոնք այն ամբողջովին վարձակալում են հողատերերից՝ արքունիքից, թագավորից, հոգևորականությունից,

- չի դիտարկվում օտարերկրյա հատվածի դերը, անտեսվում է արտաքին առևտուրը,


- տնտեսությունում նշվում է, որ առկա է 10 մլրդ լիվրի ներդրումային ապրանք, որոնց օգտագործման արդյունքում մաշվածքը տարեկան կտրվածքով կազմում է 1/5 միավոր:

Ուսումնասիրության համար Քենեն ելակետ է ընդունում գյուղատնտեսական տարվա վերջը, երբ բերքը լրիվ հավաքված է (տե՛ս Քենեի աղյուսակը):

Շրջանառության սկիզբը դրվում է հողատերերի կողմից, որոնք տիրապետում են 2 պայմանական միավոր դրամական միջոցների, տվյալ դեպքում՝ 2 մլրդ լիվրի՝ ստացված հողագործներից ռենտայի տեսքով հողի նախորդ տարում օգտագործման դիմաց: Այդ 2 միավոր դրամական միջոցներից 1 միավորով հողատերերը գնում են սննդամթերք հողագործներից՝ ապահովելով իրենց սննդամթերքի ողջ տարվա պաշարը, և 1 միավորով կենցաղային ապրանքներ՝ ապահովելով իրենց կենցաղային ապրանքների ողջ տարվա պաշարը: Այս գործառնությունների ի կատար ածմամբ նրանք սկիզբ են դնում տնտեսական շրջանառությանը՝ ավարտելով իրենց ողջ առաքելությունն աղյուսակի շրջանակներում: «Անպտուղ դասակարգը» այդ 1 միավորով ձեռք է բերում հողագործներից սննդամթերք, որով մեկ տարվա ընթացքում հոգում է իր սննդամթերքի կարիքը: Հողագործները ձեռք են բերում «անպտուղ դասակարգից» արտադրության միջոցներ հաջորդ տարում հողագործական աշխատանքների համար: «Անպտուղ դասակարգը» իր տրամադրության տակ գտնվող վերջին մեկ դրամական միավորով հողագործներից ձեռք է բերում գյուղատնտեսական արտադրանք՝ հումք, հաջորդ տարի արտադրության գործընթացը կազմակերպելու համար:

օրգանիզմում, որը կարծես թե գործում է բնական կարգին համապատասխան, անկախ մարդու «գիտակցությունից ու ցանկություններից»:

Ֆրանսուա Քենեի տնտեսական աղյուսակը⁴



Այսպիսով, հողագործ դասի մոտ պահպանվում է դեռևս 2 միավոր փողային արժեքին համարժեք հողագործական ապրանքներ, որից 1 դրամական միավոր արժեքի սննդամթերքը ծախսվում է տվյալ տարում սեփական կարիքները հոգալու նպատակով, իսկ մնացած 1 միավորը պահպանվում է որպես սերմացու հաջորդ տարվա համար: Լրացուցիչ առկա է 2 պայմանական միավոր դրամ, որն էլ հաջորդ տարի վճարվում է հողատերերին որպես ռենտա: Այսպիսով, կրկին սկզբնավորվում է շրջապտույտի գործընթացը:

Տվյալ մոդելի շրջանակում ազգային արդյունքը բաղկացած է $5 + 2 = 7$ մլրդ դրամական միավորից, որի շրջանառությունը, ապրանքների իրացումը տնտեսությունում ապահովվում է 2 մլրդ լիվր դրամական զանգվածով:

Այս 5 գործարքից հետո իրացվեց 3 միլիարդի գյուղատնտեսական արտադրանք (I, III, V գործարքներ) և 2 միլիարդի արդյունաբերական արտադրանք (II, IV գործարքներ): Ֆերմերների տրամադրության տակ մնացած 2 միլիարդի արտադրանքը չի մասնակցում այդ 2 դասակարգերի միջև ընթացող շրջապտույտի գործընթացին, այլ օգտագործվում է տվյալ դասակարգի՝ հողագործների կողմից, իսկ ֆերմերների տրամադրության տակ եղած 2 միլիարդ կանխիկ դրամական միջոցները հողի օգտագործման դիմաց հաջորդ տարի վճարվում են որպես ռենտա սեփականատերերին:

Այսպիսի տեսք ունեն առաջին մակրոտնտեսական մոդելը բաղաբառնաբանությամբ: Այն թեև որակվում է քննական պարզ ձև, սակայն առեղծված մեծ հետք թողեց մակրոտնտեսագիտության բնագավառում մոդելային մտածողու-

⁴ Թեև տնտեսագիտական մոդելների շարադրման գրաֆիկական եղանակը հիմնադրվեց «բնավարական» մտածողության ավարտից տարիներ անց, սակայն հետադարձ վերծանությամբ մասնագիտական աղբյուրներում Քենեի տնտեսական աղյուսակը շարադրվում է հիմնականում հենց այս ձևով:

քյան էվոյուցիոն զարգացման գործում: Մոդելը տնտեսագիտական մտքի զարգացմամբ փոխառնչելի էր Նոբելյան մրցանակակիր Վ. Լեոնտևի միջ-ճյուղային հաշվեկշռի մոդելին: Այլ կերպ՝ այն վերջինիս մասնահատուկ դեպքն էր փակ եռագործոն տնտեսությունում: Քենեի տնտեսական աղյուսակը այն հենքն էր, որի հիման վրա Մարքսն արարեց պարզ վերարտադրության մակրո-տնտեսական տեսություն: Ընդհանրացված տեսքով քննենք այս ամենը ըստ հերթականության:

Կարլ Մարքսի և Ֆրանսուա Քենեի մակրոտնտեսական պարզ վերարտադրության մոդելային ընդհանրությունները

Քենեի մակրոտնտեսական պարզ վերարտադրության մոդելը բարձր գնահատականի է արժանանում Մարքսի կողմից: Այնուհայտ էր, որ Քենեն մոդելի կառուցման ընթացքում օգտվել էր գիտականորեն ընդունելի գների անփոփոխության և ընդլայնված վերարտադրությունից վերացարկվելու հնարավորությունից: Ընդհանրապես առօրյա կյանքում ևս Քենեին բնորոշ էր վերացարկումային մտածողությունը: Քենեյանտելի էր համարվում, որ այդ մոդելը պարզ էր. ինչպես Էնգելը կնշեր՝ այնքան պարզ, որքան իր ժամանակի համար հանճարեղ: Հետաքրքրական էր, որ «գնավարները» արտադրողական աշխատանքի ուսումնասիրության օբյեկտը, ի տարբերություն «առևտրականների» (մերկանտիլիստներ), տեղափոխեցին արտադրության, ավելի ճիշտ՝ գյուղատնտեսության ոլորտ:

Սակայն, որպես թերություն միայն գյուղատնտեսության ոլորտում կատարված աշխատանքն էր (ինչպես կնշի Կ. Մարքսը՝ իր հասարակական նշանակությամբ) դիտվում արտադրողական նշանակությամբ: Մոտեցումը բացատրվում էր Ֆրանսիայի տնտեսության զարգացման տվյալ ժամանակահատվածի յուրահատկությամբ: Քենեն, ի տարբերություն Մարքսի, հասարակական արտադրությունում տարանջատելի էր դիտարկում գյուղատնտեսության և արդյունաբերության ոլորտները⁵, ուշադրություն չէր դարձնում հետագայում Մարքսի կողմից այդքան խոլությամբ դիտարկված արտադրության միջոցների և սպառման առարկաների արտադրության հնարավորությանը:

Դիտարկենք հասարակական կապիտալի մակրոտնտեսական պարզ վերարտադրության հնարավորությունը⁶ ըստ Մարքսի կառուցած գծապատկերի: Նա առաջնորդվում է այն ենթադրությամբ, որ կապիտալի օրգանական կազմը հավասար է չորսի հարաբերությունը մեկին (C:V=4:1) և հաջորդ տարիներին մնում է անփոփոխ:

Մոդելում տեղի ունեցող հետագա զարգացումների ընթացքը քննարկենք ըստ 1971 թվականին լույս տեսած քաղաքատնտեսության ձեռնարկի⁷:

Հավելյալ արժեքի նորման հավասար է 100 % (m' = 100%)

I. Արտադրության միջոցներ 4000c+1000v+1000m=6000

} = 9000

II. Սպառման առարկաներ 2000c+ 500v+ 500m =3000

⁵ Ըստ այս սկզբունքի՝ տարանջատվում էր հասարակության դասակարգային կառուցվածքը՝ սոցիալ - տնտեսական պայմանների անտեսմամբ:

⁶ Հասարակական կապիտալի պարզ վերարտադրության ժամանակ «...տվյալ արժեքով մի հասարակական կապիտալ ինչպես նախընթաց տարում, այնպես էլ այս տարի ապրանքարժեքի միևնույն քանակն է մատակարարում և միևնույն քանակի պահանջմունքներ է բավարարում, թեև ապրանքների ձևերը վերարտադրապրոցեսում կարող են փոփոխվել», Կ. Մարքս, «Կապիտալ», հ. II, Եր., 1936, էջ 363:

⁷ Տես Չ. Գ. Բաշինջադյան, Վ. Մ. Գաբրիելյան, Գ. Ա. Ղարիբյան, Վ. Մ. Աղուզումյան, Ս. Գ. Չուրաբյան, Քաղաքատնտեսության ձեռնարկ (մինչամուսուլիստական կապիտալիզմ), Եր., 1971, էջ 502 - 508:

Ինչպես Քենեի, այնուհետ Լեոնտևի մոտ, այս դեպքում ևս թողարկման այն մասը, որ չի սպառվում տվյալ ճյուղում, սպառվելու է վերջնական արտադրանքի և կամ հումքի տեսքով մյուս ճյուղ(եր)ում:

Այսպիսով, I ստորաբաժանման մեջ արտադրության անընդհատությունն ապահովելու նպատակով տվյալ տարում մաշված $4000(c)$ միավորի արտադրության միջոցներն ամբողջովին կվերկանգնվեն: Հետևաբար, I ստորաբաժանման $6000(4000c+1000v+1000m)$ միավոր արտադրության միջոցների արտադրանքից $4000(c)$ միավորը կսպառվի այդ նույն ճյուղում:


II ստորաբաժանման $1000(500v + 500m)$ միավոր արժողությամբ սպառման առարկաները կիրացվեն տվյալ ճյուղի ներսում:

Այնուհետ՝ I ստորաբաժանման «ավելցուկային» $2000(c)$ միավորի արտադրության միջոցները կփոխանակվեն II ստորաբաժանման 2000 միավոր արժողությամբ սպառման առարկաների հետ: Այս օրինակում, կարծես թե, փողին ավելի պասիվ դեր է հատկացվում, քան Քենեի մոդելում, այն իմաստով, որ այն «տեսանելի ուղղակիությամբ» չի սպասարկում տնտեսությունում կնքված ողջ գործարքները, և ի տարբերություն Վ. Լեոնտևի մոդելի՝ այստեղ տնտեսությունը տարանջատվում է 2 ճյուղի:

Այս փոխանակությունը առավել արտահայտելի դարձնելու նպատակով բանաձևենք, քանի որ տեսանելի կլինի նաև փողի դերը գործարքների սպասարկման ընթացքում.

$$I v + m (1000v + 1000m) = II c (2000)$$

I ստորաբաժանման մասնակիցները (բանվորները և կապիտալիստները) ստանում են իրենց կենսագործունեության համար անհրաժեշտ գոյամիջոցները, իսկ II ստորաբաժանման կապիտալիստները՝ վերականգնում են տվյալ տարում սպառված արտադրության միջոցները:



I. Արտադրության միջոցներ


II. Սպառման առարկաներ

Մարքսը վերագրյալ գծապատկերի օգնությամբ տվյալ մոդելի շրջանակներում բացահայտում է իրացման երեք գլխավոր պայմաններն ու համամասնությունները:

Առաջին՝ $I(v + m) = II(c)$

Իրացման առաջին պայմանի գծապատկերը

I. $4000 c + 1000 v + 1000 m = 6000$



II. $2000 c + 500 v + 500 m = 3000$

Ֆրանսուա Քենեի պարզ վերարտադրության և Վասիլի Լեոնտևի միջոցառային հաշվեկշռի մոդելային ընդհանրությունները

Լեոնտևի փակ տնտեսության համար եռագործոն մոդելը կարելի է ներկայացնել երեք հավասարումների համախմբի տեսքով⁸:

$$\begin{aligned} (1 - a_{11})X_1 - a_{12}X_2 - a_{13}X_3 &= 0 \\ -a_{21}X_1 + (1 - a_{22})X_2 - a_{23}X_3 &= 0 \\ -a_{31}X_1 - a_{32}X_2 + (1 - a_{33})X_3 &= 0: \end{aligned}$$

(Պայմանականորեն ընդունենք, որ $a_{ij} = a_{ji}$, և հավասարումների համակարգը կունենա ներքոգրյալ տեսքը).

$$\begin{aligned} (1 - a_{ij})X_1 - a_{ij+1}X_2 - a_{ij+2}X_3 &= 0 \\ -a_{i+j}X_1 + (1 - a_{i+j+1})X_2 - a_{i+j+2}X_3 &= 0 \\ -a_{i+2j}X_1 - a_{i+2j+1}X_2 + (1 - a_{i+2j+2})X_3 &= 0: \end{aligned}$$

Հավասարումների այս համակարգում X փոփոխականը ցույց է տալիս տնտեսության երեք հատվածներում թողարկված արտադրանքի ծավալը, համապատասխանաբար՝ X_1, X_2, X_3 :

a_{ij} - ցույց է տալիս ծախսեր-թողարկում հարաբերակցությունը: i - ընդհանուր (տե՛ս ըստ տողերի) արտադրանքը օգտագործվում է j - ընդհանուր (տե՛ս ըստ սյուների) արտադրանքի թողարկման համար, որպես ռեսուրս:

$(1 - a_{ij})X_i$ արտադրանքի այն ծավալն է, որը չի օգտագործվել տվյալ ճյուղում: Այն հավասարվում է տվյալ ճյուղից մնացած, այս դեպքում՝ 2 ճյուղերից կատարված գնումների ծավալին:

Գյուղատնտեսությունում ամբողջական արդյունքը հավասարվում է հողատերերին ու արհեստավորներին ($a_{12}X_2 + a_{13}X_3$) = 3 վաճառված և իրենց տնօրինության տակ մնացած արտադրանքի ($a_{11}X_1$) = 2 գումարին: ($a_{12}X_2 + a_{13}X_3$) = 3 արտադրանքի այն քանակությունն է, որը մնում է հողագործների տրամադրության տակ (այն էլ հավասար է $(1 - a_{11})X_1 = 3$) սեփական սպառումը կազմակերպելուց հետո: Քանի որ տրված են $X_1 = 5, X_2 = 2, X_3 = 2$, ապա տեխնոլոգիական գործակիցները հաշվարկվում են պարզագույն մաթեմատիկական սկզբունքով՝ $a_{11} = 2/5, a_{12} = 1/2, a_{13} = 1; a_{21} = 2/5, a_{22} = 0, a_{23} = 0, a_{31} = 1/5, a_{32} = 1/2, a_{33} = 0$:

Քննենք այն սխեմատիկորեն՝

Տնտեսությունում ներկայացված ճյուղերը՝ ըստ խավերի	Գնումների ծավալը			Արտադրության տարեկան ծավալը
	I	II	III	
1. Ֆերմերներ	2	1	2	5
2. Հողատերեր	2	0	0	2
3. Արհեստավորներ	1	1	0	2
Ընդհանուր գնումները	5	2	2	9, որում 2 միավորը դրամական է

$$\begin{aligned} + 0,6(5) - 0,5(2) - 1(2) &= 0, \\ - 0,4(5) + 1(2) - 0 &= 0, \\ - 0,2(5) - 0,5(2) + 1(2) &= 0: \end{aligned}$$

Այս հավասարությունների համակարգում $+0,6(5) = 3$ I ցույց է տալիս արտադրանքի այն քանակությունը, որը չի սպառվել տվյալ ճյուղում, դիցուք՝ գյուղատնտեսությունում, որը ըստ տողի $- 0,5(2) = 1$ II սպառվել է հողատերերի և -

⁸ Տե՛ս **М. Блауг, Экономическая мысль в ретроспективе, М., 1994, էջ 22-25.** Մոդելային այս ընդհանրությունները ներկայացված են ըստ Բլաուգի դասագրքի:

$1(2) = I 2 I$ արհեստավորների կամ «անպտուղ դասակարգի» կողմից: Ըստ սյունի ցույց է տրվում, որ $- 0,4(5) = I 2 I$ վճարվել է հողատերերին և $- 0,2(5) = I 1 I$ գնվել է «անպտուղ դասակարգից»:

Հողատերերը, $- 0,4(5) = I 2 I$ ստանալով հողագործներից, այն ծախսել են՝ գնելով $- 0,5(2) = III$ հողագործներից և $- 0,5(2) = III$ «անպտուղ դասակարգից», որն էլ հավասարեցվում է $+1(2) = I 2 I$ ցուցանիշին:

«Անպտուղ դասակարգը» կամ տարբեր աղբյուրներում՝ արհեստավորները, արդյունաբերողների խավը $+ 1(2) = I 2 I$ ձեռք են բերել հողագործներից $- 1(2) = I 2 I$; տե՛ս 1-ին տող 3-րդ ցուցանիշ, և $+ 1(2) = I 2 I$ -ից համապատասխանաբար (3-րդ տող) $- 0,2(5) = I 1 I$ ձեռք են բերել ֆերմերները և $- 0,5(2) = I 1 I$ հողատերերը:

Իրացման առաջին պայմանը


Առաջին ճյուղում չսպառված արտադրանքը գնվում է տնտեսության «երկրորդ և երրորդ հատվածներում»:

Երկրորդը՝

Տնտեսության «երկրորդ հատվածի» թողարկած արտադրանքը հավասար է «առաջին և երրորդ հատվածների գնումներին»:

Տնտեսության «առաջին հատվածից» տրամադրվում է 2 միավոր դրամական միջոցներ «տնտեսության երկրորդ հատվածին», որով էլ ձեռք է բերվում արտադրանք «առաջին և երրորդ հատվածներից»:

Մակրոտնտեսական պարզ վերարտադրության տնտեսական շրջապտույտի մոդելը փակ տնտեսությունում⁹



⁹ Տե՛ս Кэмпбелл Р. Макконелл, Стэнли Л. Брю, Экономика, М., 1992, էջ 101-102, Джеффри Д. Сакс, Фелипе Ларрен Б., Макроэкономика. Глобальный подход, М., 1996, էջ 41-46. “Курс экономической теории. Общие основы экономической теории. Микроэкономика. Макроэкономика. Основы национальной экономики”, под. рук. А. В. Сидорович, М., 2001, էջ 29-31:

Մասնագիտական ժամանակակից դասագրքերում մանրամասնված է մոդելի տնտեսագիտական բովանդակությունը: Ուստի ներկայացնենք միայն վերջինիս էվոլյուցիոն, ընդհանրական դերը և նշանակությունը տնտեսագիտության զարգացման գործում:

• Նախ՝ ի համեմատություն Քենեի տնտեսական աղյուսակի, կառավարությունը տնտեսական գործունեություն չի ծավալում պարփակված գաղափարախոսական շրջանակներում: Այն, հաշվի առնելով տնտեսագիտության, տնտեսագիտական մտքի էվոլյուցիան, տնտեսավարող սուբյեկտին դիտում է տնտեսական շրջապատույտի յուրօրինակ մասնակից, իսկ հարկահավաքությանը լրացուցիչ ապահովվում է շուկայական տնտեսությանը սոցիալական կողմնորոշում:

• Գոյություն չունի տնտեսության որևէ ճյուղի ֆեռտիչացում:

• Հակառակ մարքայան մակրոտնտեսական պարզ վերարտադրության մոդելի՝ այն չի նախատեսում թողարկված արտադրանքի սպառում ճյուղի ներսում: Տվյալ դեպքում այն վերացարկելի նախապայման է:

• Վ. Լեոնտևի փակ տնտեսության եռագործոն միջճյուղային հաշվեկշռի մոդելում տնտեսությունը քննվում է տրոհված երեք ճյուղերի: Դա ևս կառուցված է այն սկզբունքով, թե ինչ չի սպառվում տվյալ ճյուղում, ապա որպես հումք և/կամ պատրաստի արտադրանք սպառվելու է մյուս ճյուղ(եր)ում:

• Ֆր. Քենեի և Վ. Լեոնտևի մոդելներում առավել ակնհայտ է փողային միավորի դերը, սակայն այն նույնպիսի դրոշակիությամբ չի սպասարկում տնտեսական գործարքները, ինչպես էվոլյուցիոն արդի տարբերակում:

• Մակրոտնտեսական պարզ վերարտադրության տնտեսական շրջապատույտի մոդելը փակ տնտեսությունում փողային գործարքները, ստացվող եկամուտները և կատարվող ծախսերն առանձնակի անջատված են: Այդ գործարքներին տրվում են տնտեսագիտական հստակ սահմանազատում:

• Վերջին դեպքում ակնհայտ է դասական ինքնաշխատ հավասարակշռության հաստատման, Ժ. Բ. Մեյի շուկաների օրենքի, ինչպես նաև Ջ. Մ. Քեյնսի և Կ. Մարքսի տնտեսագիտական մտածողության ազդեցության իներցիան: Այն արտահայտվում է մոդելում կառավարության վերոգրյալ հստակ դերով:

• Վերջապես, բոլոր չորս մոդելներն էլ, չնայած վերացարկման տարամակարդակությանը, ժամանակային տարաբնույթ (ուսմունքային) պատկանելիությանը, քննում են տնտեսությունը դասական հավասարակշռության հաստատման դիրքերից:

Г. А. ГАРИБЯН, А. Р. МАРТИРОСЯН - Внедрение в политэкономию модельного мышления в контексте эволюции теории простого воспроизводства. - В XVIII веке Франсуа Кенэ и его сподвижники стали основоположниками нового течения в экономической теории - физиократии. Венцом этой теории является макроэкономическая таблица простого воспроизводства Ф. Кенэ. В экономической теории это первое исследование, где основополагающее значение приобретает категория совокупного общественного продукта. Современные сложные экономические модели основаны на применении модельного образа мышления Кенэ. Экономическая таблица Кенэ является модельным отображением системы простого воспроизводства. Экономическую таблицу Кенэ можно сравнить со статической моделью межотраслевого баланса лауреата нобелевской премии В. Леонтьева, известной также как трехфакторная модель "затраты-выпуск" в закрытой экономике.